



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Գ Ե Վ Ո Ր Հ Ո Ւ Ն Զ

Ավանդաբար մեր վաճքերում և եկեղեցիներում ու. Ստեփանոս Նախասարկավագի ստուճը դեկտեմբեր ամսի վերջին, Ավագ սուների շարքում, համարվում էր մանավանդ ստուճը սարկավագների և ժառանգավոր սաների:

Այս գեղեցիկ ավանդությունը պահվել է նաև Մայր Աթոռում: Տ. Տ. Վազգեն Վեհափառ Հայրապետի գահակալության օրերին, ու Ստեփանոս Նախասարկավագի ստուճը ստուճն է հոգևոր ճեմարանի շրջանավարտ Մայր Աթոռի երիտասարդ միարան սարկավագների, որոնք մեծ խանդակառությամբ ողեկոչում են անոնն ու հիշատակը իրենց մտատիպար և եկեղեցու առաջին համատակ ու մարտիրոս ու. Ստեփանոսի:

Այս տարի էլ ու Ստեփանոսի ստուճը, դեկտեմբերի 26-ին, շաբաթ օրը, եղավ սրտագին ատիքը նման համեմատությունների և հոգեվոր ուրախության:

Այդ օրը հոգևոր ճեմարանի Գ լսարանի բոլոր նինգ ուսանողները միակամ ու միախորհուրդ, իրենց ազատ կամքով, սրտի թելադրանքով ու թրթիռով, ձեռնադրությամբ ընդունեցին եկեղեցու հոգևոր սպասավորության առաջին աստիճանը խորհրդանշող սարկավագական ուրարտ: Այդ քայլը մեր տղաների հոգեկան չափահանության, մըտածումի և զգացումի հասունության պայծառ վկայությունն էր:

Մայր Աթոռու, ազգիս Վեհափառ Հայրապետը այդ օրը մի անգամ ևս ապրեցին նոգեվոր նոր հնաձի բերկրանքը՝ հինգ նոր սարկավագների ձեռնադրությամբ:

Հինգ-վեց տարիներ առաջ այդ տղաքը, որոնցից երեքը հայրենի աշխարհից են և երկուսը՝ սկսած աշխարհից են և երկուոր՝ սկսած աշխարհից, ծվեճ-ծվեճ նոգիներով եկան Մայր Աթոռ ուսանելու, եկան ընտանեկան տարբեր միջավայրերից, տարբեր նոգերանությունների և համասիրությունների տեր:

Ս. Էջմիածնի կրոնաշունչ մթնոլորտի մեջ այդ տղաքը անցկացրին իրենց ուսումնառության բեղուն տարիները: Ս. Էջմիածնի եղավ նրանց հոգու, մտրի ու սրտի խանձարուրը: Նրանք այս դարավոր Հաստատության հովանու տակ, Հայոց Հայրապետի նայվածքի ու օրինության ներք լցվեցին հայ եկեղեցուն և հայ ժողովրդին ծառայելու, նվիրումի և զոհողության գիտակից զգացմունքներով և զինվորագրվեցին նրա հոգևոր բանակին:

«Հայր իմ և մայր իմ թողին զիս և Տէր ընկալա զիս» (Սղմ. ԻԶ. 10):

Ս. Էջմիածնի խորհրդի ու լուսի մեջ հասունացավ, կազմակերպվեց և իմաստավորվեց նրանց հոգևոր, մտավոր կյանքը գոհացուցիչ պատրաստությամբ, նվիրվելու համար հայ եկեղեցու և հայ ժողովրդի հոգևոր ծառայության սպասին, որպես անձնուրաց

և սրտեռանդ մշակներ: Նրանք՝ այդ հինգերը, Մայր Աթոռում գտան նաև ծննդական շերս գորգուրանք, կյանքի ապահովություն ու իրենց հոգու, մորքի զարգացման և հաստանության համար մաքոր, քրիստոնեական ու հայեցի միջավայր ու շունչ, պատրաստվելու համար վաղվա իրենց մեծ գործին և ապագային:

Մեր նախնիքների հավատքի և նվիրումի տեսիլքն է մարմնավորում այս խոստմնալից, երիտասարդ կյանքերի մեջ: Հաշորդ տարիներին, վստահ ենք, որ փորձառության բովից անցնելով, նրանք Մայր Աթոռում, Հայոց Հայրապետի շնչի տակ, էլ ավելի կմարզեն, էլ ավելի կրօճվեն՝ կարենալ դառնալու համար արժանի մշակներ և հաշորդներ իրենց հոգնոր մտադիպարներին, որոնց նվիրումով ու աշխատանքով փառավորվել է Մայր Աթոռ ու Էջմիածինը և հայեկեղեցին:

Մեր եկեղեցին իր պատմական կյանքի ընթացքում միշտ է մասնավոր կարևորությամբ է ձգուել հոգնոր սերնդի պատրաստման գործին: Վկա են անցյալի մեր փառավոր վարդապետարաններն ու դպրեվանքերը՝ Վաղարշապատը, Դվինը, Սյունյաց դրաբուցը, Նարենիս վանքը, Գլաձորը, Տաթևը, Սաթևը, Սյունյաց անապատը, Ամրողուն, 19-րդ դարի 70-ական թվականների Գևորգյան ճեմարանը, ապա Արմաշը, Երոսաղեմն ու Անթիլիասը, որոնք հանդիսացել են հոգնոր նոր սերնդի պատրաստության համար «քացեալ աղբիր գիտութեանն Աստուծոյ» (Կորյուն):

Հոգնոր բազում սերունդներ են ծնկի հջել մեր հավատքի սրբազն խորանների առաջ. մեր եկեղեցու կամարների տակ միշտ հնչել է Աստվածային և Երկնավոր շնորհը: Այդ Աստվածային Զայնի և Կոչման եւսկից են գնացել հոգնոր նոր սերունդներ՝ նոր «անձինք նուիրեալը», ծառայության և նվիրումի կրակե շապիկը հագած, իրենց երիտասարդ ու կանաչ կյանքերի, մատաղ հոգիների պատրագը բոլորանվեր ընծա բերելու աստվածային պաշտոնին և եկեղեցու հոգեվոր սպասին:

Մայր Աթոռում կատարված այս նոր ճեղնադրությամբ հայ եկեղեցու սպասավորության կանչված ընտիր հոգիների հավերժական աշակերտության ուլին շղթայի վրա ավելանում է հինգ նոր օղակ:

Մեր ովատապահ հոգևորականությունը իր ետին ունի քրիստոնեական առաքինության, մշակութային սուաքելության և հայրենականեր գործունեության փառավոր անցյալ և ավանդություններ՝ կոչումի և ծառայության ճանապարհի վրա:

Կարիքը կա միշտ և հանապազ հոգևոր նոր ննձի՝ կարենալ լցնելու համար այն դատարկությունը, որ իրենց ետին են թողնում ընդմիշտ մեզնից հեռացած մեր արժանավոր հոգևորականները:

Մեր եկեղեցու հարատևությունը, առաքելությունն ու կենտունակությունը, մեր օրերին մասնավանդ, կախում ունեն վանքերի մեջ և սուաչին հերթին Մայր Աթոռում, հայրենի հողի վրա լուսամիտ, հոգևոր ու բարդական ամոր ու սկզբունքային դաստիարակություն ստացած, արժանավոր ու պատրաստված հոգևորականներից:

Բարեկարգ ու զորավոր եկեղեցի՝ Եշանակում է, ամեն բանից առաջ, հավատավոր, զոհաբերվող ու կարգապահ հոգևորականություն, մեր նախնյաց պայծառ ու բարձր տեսիլքով՝ կարենալ շարունակելու համար պատմական իր դերը նաև պայօն, արդի կյանքի բարդ ու հակասական պայմաններում:

Այս հավատումի մեջ է, որ սրտառուչ գեղեցկություն և խորը իմաստ է ստանում նաև Մայր Աթոռում հինգ նոր սարկավագների ձեռնադրությունը, նրանց սրբազն ուստուք, զինվորագրությունն ու խիզախումը: Հոգևոր այս հունգը նոր ուժ, նոր կորով է բերում այս դարավոր Հաստատության և նրա միջոցով՝ նաև մեր եկեղեցուն:

Հայոց Հայրապետի, Մայր Աթոռ ու Էջմիածին այս ուրախությունն ու բերկրանքը բաժանում է նաև մեր հավատավոր ժողովուրդը, այս երիտասարդ սարկավագների ուստուք, սարկավագներ, որոնք խոստանում են պատվով և սրբությամբ կրել իրենց ուսերի վրա մեր նախնյաց սրբությունների, հավատքի ու հայրենասիրության ուստի տապանակը:

Հայոց Հայրապետը խանդավառ է ու լավատես այս հոգնոր նոր հունգի տեսիլքով:

«Հունգը բազում են և Մշակք սակաւ» (Մատթ. թ 37, Ղոկ. ժ 2):

«Բազում են կոչեցեալք և սակաւք՝ ընտրեալք» (Մատթ. ԽԲ 14):

